

ՆՈՐԸ ՆԱԽԱԳՐԱՅԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայերենը աշխարհի հնագույն գրավոր լեզուներից մեկն է, իսկ մեր հին գրական հայերենը՝ դրաբարը իր մշակվածությամբ, հարուստ գրավոր աղբյուրներով կանգնած է այնպիսի լեզուների շարքում, ինչպիսիք են սանսկրիտը, հին հունարենը, լատիներենը և այլն:

Ինչպես ամեն մի գրական լեզու, հայերենն էլ ունի իր գրավոր և նախագրային շրջանները: Մեր լեզվի գրավոր շրջանը ավելի քան մեկուկես հազարամյա պատմություն ունի: Շատ ավելի մեծ ժամանակաշրջան է ընդգրկում նրա նախագրային էտապը: Պետք է նկատել, որ հնդեւորոպական լեզուների միասնության շրջանի վերջը այժմ վերագրվում է մ. թ. ա. 5—4-րդ հազարամյակներին: Ըստ էության այդ շրջանից հետո է սկսվում հայոց լեզվի ինքնուրույն զարգացումը:

Որ հայերենը պատկանում է հնդեւրոպական լեզվական ընդհանրությանը, հաստատվել է մեկ հարյուրամյակից էլ առաջ, և այժմ այդ պրոբլեմն ընդհանուր առմամբ լուծված է համարվում: Սակայն ի՞նչ կյանք է ունեցել հայերենը Մեսրոպ Մաշտոցից առաջ, նախագրային շրջանում, կառուցվածքային ի՞նչ հատկություններ է ունեցել նա, զարգացման ի՞նչ օրինաչափություններով է բնութագրվում նախագրային հայերենը: Ահա հարցեր, որոնք վաղուց զբաղեցրել և այժմ էլ զբաղեցնում են մեր և այլազգի հայագետներին:

Այժմ հայագիտության այս կարևոր բնագավառում ուշագրավ աշխատանքներ են տարվում: Վերջին տարիներին նշված ուղղությամբ լուրջ գործունեություն է ծավալել պրոֆ. Գ. Զահուկյանը: Նա հրապարակ է հանել մի շարք ուսումնասիրություններ, որոնց մեջ առանձնապես հիշատակելի է «Ակնարկներ հայոց լեզվի նախագրային շրջանի պատմության» (ռուսերեն) աշխատությունը¹:

Հնդեւրոպական ցեղակից լեզուների հետ հայերենի ունեցած առնչակցությունների և ընդհանրապես հայերենի և այլ լեզուների կապերի վերաբերյալ ուսումնասիրություններ կատարել են Հ. Պետերսանը, Ֆ. Վինդիշմանը, Ֆ. Մյուլլերը, Հ. Հյուբշմանը, Ա. Մեյեն, Հ. Աճառյանը, Գ. Ղափանցյանը և այլք: Մեծ է նրանց ավանդը հայագիտության մեջ: Սակայն լեզվաբանության զարգացման նոր դարաշրջանը, մանավանդ վերջին տասնամյակներին, ինչպես լեզվագիտության շատ բնագավառներում, այնպես էլ համեմատական լեզվաբանության մեջ, նշանավորվեց նոր հարցադրումներով, վերամշակվեցին ու առաջ տարվեցին փաստերի քննության նախկին եղանակները, ընդլայնվեցին լեզվաբանական ըմբռնումների, պատկերացումների շրջանակները:

Եվ ահա պրոֆ. Գ. Զահուկյանը, հաշվի առնելով այդ բոլորը, նշված աշխատության մեջ նոր դիրքերից ու նոր փաստարկումներով քննեց նախագրային հայերենի մի քանի պրոբլեմատիկ հարցեր:

Աշխատությունը բաղկացած է մեկ ներածական, երեք հիմնական և մեկ ավարտական (ամփոփիչ) դիւսներից: Ներածական գլխում հեղինակը համառոտ ակնարկ է նետում հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրության անցած ուղու վրա, ընդհանուր գծերով բնութագրում է հնդեւրոպական ու հայկական բաղաձայնական համակարգերը: Ի միջին այլոց, պրոֆ. Գ. Զահուկյանը հայ լեզվաբանության պատմության (XVIII—XIX դդ.) բերած նոր փաստերի հիման վրա հայերենի ու ցեղակից լեզուների բնորոշ ընդհանրությունների գաղափարի ձևավորման մեջ առաջնությունը տալիս է ոչ թե հվորոպացի հայագետներին (Պետերսան և ուրիշներ), այլ հայ հեղինակներին:

¹ Г. Д ж а у к я н, Очерки по истории дописьменного периода армянского языка, Ереван, 1967 г.

Լ՛նդդծելով ավանդական հայագիտության մատուցած ծառայությունները, հեղինակը միաժամանակ նշում է, որ անցյալում որոշակիորեն շեն տարբերել հայերենի հնդերոպական կազմի հիմնական ու երկրորդական նստվածքները, ավելի ուշագրություն են դարձրել օրինաչափական երևույթներին, իսկ հիմնական օրինաչափություններին զուգահեռ գործող շեղումները հանգամանորեն քննության չեն ենթարկել:

Առաջին անգամ հայերենի պատմա-համեմատական ուսումնասիրության մեջ առաջ քաշելով հիմնական ու երկրորդական նստվածքների ըմբռնումը, պրոֆ. Գ. Զահուկյանը դրանով իսկ նոր հեռանկարներ է բացում մեր լեզվի բաղաձայնական համակարգի կազմավորման ակունքները պարզաբանելու ուղղությամբ: Հայերենի շատ իրողություններ հնդերոպական ենթաշերտի արտահայտություն են: Հնդերոպական ենթաշերտ ասելով հեղինակը հասկանում է այն լեզվական տարրերը, որոնք ներմուծվել, անցել են հայերենի համակարգին նրա մեջ ձուլված այլ հնդերոպական լեզուներից:

Անդրադառնալով հնդերոպական նախալեզվի բնութագրությանը, պրոֆ. Գ. Զահուկյանը ամփոփում ու խորացնում է այն տվյալները, որոնք ձեռք են բերվել անցյալի և ժամանակակից լեզվաբանների ջանքերով: Այս առիթով ուշագրավ դիտողություններ է անում նախնական ընդհանրության, նրա ժամանակաշրջանի, հնդերոպական ցեղերի բնակության տեղի, հնդերոպական բարբառների ու նրանց փոխարարելիքային, ինչպես և հնդերոպական ու այլ լեզվաբանականների առնչակցությունների վերաբերյալ:

Հստակորեն են անցկացված հնդերոպական ու հին հայերեն բաղաձայնական համակարգերի զուգահեռները: Հայտնի է, որ հնդերոպական համակարգը հարուստ էր պայթականներով, աղբյուր՝ շփականներով, իսկ ձայնորդներն ունեին եռակի ֆունկցիա՝ վանկարար հնչյունի (ձայնավորական), երկրարբառի ոչ վանկարար տարրի և ոչ վանկարար հնչյունի (բաղաձայնական) հատկություններ: Հին հայերենը փոփոխություններ է մտցրել հնդերոպական և հնչյունական կազմի, և հնչյունների ֆունկցիաների մեջ: Նա հարուստ էր պայթականներով ու շփականներով, ձայնորդներն ունեին հիմնականում բաղաձայնական արժեք, կազմավորվել էր կիսաշփականների խումբը, առաջացել էին ո, դ ձայնորդները, կատարվել էին տեղաշարժեր պայթականների համակարգում, տեղի էին ունեցել քմայնացման պրոցեսներ: Նշված փոփոխություններն, անկասկած, զգալի նորություններ էին բերել հայերենի հնչյվածքական հակադրությունների համակարգում:

Աշխատության առաջին դիսուս բնեվում է պայթականների (հպականների) պատմական դարգացումը, այսինքն՝ դրանց տեղաշարժերը Պայթական բաղաձայնների փոփոխությունները բնութագրվում են սիստեմային լեզվաբանության դիրքերից, որոշվում է տեղաշարժերի բաշխումը (դիստրիբյուցիան), տրվում են փոփոխությունները պայմանավորող դիրքերը: Հեղինակը ներկայացնում է բրթնայինների, ատամնայինների, ետնալեզվայինների օրինաչափ անցումները: Չնայած որ, բաղաձայնական տեղաշարժերին հայագիտության մեջ շատ ուսումնասիրողներ են ուշագրություն դարձրել, և թիչ բան չի արվել այդ ուղղությամբ, պրոֆ. Գ. Զահուկյանը ամբողջացրել, խորացրել է նյութի մշակումը, և խնդրի լուծումը դրել է նոր մակարդակի վրա: Նորը և ուշագրավը այստեղ նաև այն է, որ օրինաչափական երևույթների պարզաբանմանը հաջորդում է մի ավելի հանգամանալից ուսումնասիրություն՝ նվիրված հիմնական օրինաչափություններին զուգահեռ շեղումները երևույթներին: Առաջին անգամ հայրց լեզվի պատմության այս կողմը ներկայացվում է ամբողջական դիտական վերլուծությամբ:

Հեղինակը ընդգծում է հիմնական օրինաչափություններից կատարվող շեղումների տարաբնույթ լինելը, դասադասում է դրանք ու ներկայացնում փաստական հմուտ ցուցադրումներով: Տարբերակված են սովորական և առանձնահատուկ շեղումներ: Առաջինները հեշտ մեկնաբանելի են, ակնհայտ են, ասենք, նրանով, որ քննվող արմատները նմանաձայնական բնույթ ունեն, և կամ շեղումները արդյունք են հարևան, կից հնչյունների ազդեցության: Երկրորդները ավելի դժվար մեկնաբանելի են, ըստ էության կապվում են ենթաշերտային կողմի հետ. կարող են նաև դեր խաղացած լինել փոխառյալ բառերը, կամ էլ բարբառային ներթափանցումները:

Աշխատության երկրորդ դիսուս հանգամանորեն ու համոզիչ փաստարկումներով քննվում է պայթականների (հպականների) պատմությունը այլ կողմից, դրանց քմայնացումը: Քննությունը կատարվում է նույն մոտեցումով: Նախ բացատրվում են հիմնական օրինաչափությունները, ապա՝ դրանցից կատարվող շեղումները: Չնայած նրան որ, քմայնացում է երկու կարգի քմայնացում: Առաջին քմայնացմամբ հնդերոպական քմայնացած ետնալեզվայինները հայերենում վերածվում են սովական կիսաշփականների ու շփականների: Երկրորդ քմայնացմամբ հնդերոպական ետնալեզվայինները հայերենում վերածվում են շլական կիսաշփական (ու շփական) հնչյունների (ջ ճ): Որոշակի դիր-

քերում և տարբեր ժամանակաշրջաններում առաջին և երկրորդ քմայնացումների ենթարկվել են նաև առաջնալեզվային (ատամնային) պայթականները: Սրանից հետևում է, որ առաջին և երկրորդ քմայնացումների արդյունքների տարբերությունը նախագրային հայերենում բնորոշ արտահայտությունն զտած հնչյունափոխական կարևոր օրինաչափություն, օրենք է: Այս օրենքի ձևակերպումը պատկանում է հեղինակին, և համեմատական լեզվաբանության մեջ ունեցած իր նշանակությամբ՝ ազատ կերպով կարելի է դնել Գրիմի, Վեռների, Գրասմանի, Մեյերի ձևակերպած օրենքների շարքը, ուստի իրավամբ այն կարելի է կոչել Զաֆուլյանի օրենք:

Ավելորդ չէ նշել, որ այս երևույթները առաջին անգամ հայագիտության մեջ լուրջ ուշադրության են արժանանում: Եվ հեղինակը միանգամայն իրավացիորեն է կշտամբում այն հետազոտողներին, որոնք հնդկարոպական լեզուների համեմատական քերականության բնագավառում ըստ արժանվույն չեն զննատել հայերենի ընթերցած փաստերը: Այդ փաստերի բարեխիղճ ու հմուտ օգտագործումը, բնականաբար, կարող է շատ բան պարզել ցեղակից լեզուների համապատասխանությունների առանձին մշուշապատ կողմերի մեկնաբանության մեջ:

Լեզվի զարգացման օրինաչափությունների քննությունը, առանց փոփոխությունների ժամանակագրական շերտերի բացահայտման, կարող է շատ պարզունակ երևալ: Ահա թե ինչու նախագրային հայերենում կատարված հնչյունական տեղաշարժերը պրոֆ. Զահուկյանը ներկայացնում է ժամանակագրական որոշակի հաջորդականությամբ, ինչպես նրանք տեղի են ունեցել: Իսկ ապարավոր աղբյուրներով չափանդված շրջանի համար այնքան էլ հեշտ բան չէ: Ընդունվում է այսպիսի հաջորդականություն: Առաջին քմայնացումը գործել է դեռևս հնդկարոպական միասնության շրջանում և շարունակվել, ավարտվել է հայերենում ու որոշ ցեղակից լեզուներում: Դրանից հետո (մ. թ. ա. 2-րդ հազարամյակի սկզբներից մինչև այդ հազարամյակի վերջերը, մոտ 12-րդ դարը) տեղի է ունենում բաղաձայնների հայկական տեղաշարժը: Երկրորդ քմայնացումը հատկացվում է մ. թ. ա. երկրորդ հազարամյակի վերջերից մինչև մ. թ. ա. IV—III դարերն ընկած շրջանին:

Քմայնացման պրոցեսների այսպիսի տարբերակված ըմբռնումով և քմայնացման օրենքի հմուտ ձևակերպումով պրոֆ. Զահուկյանը, անկասկած, մեծ ներդրում է կատարում նախագրային հայերենի գիտական ուսումնասիրության մեջ: Անցյալի որոշ, նույնիսկ ականավոր հայադեմոստրատիկ հայերենի կիսաշփականների կազմավորման մեջ էական դեր էին հատկացնում տեղական, հատկապես կովկասյան լեզուների ազդեցությունը: Մինչդեռ քմայնացման օրենքի բացահայտումով, բնականաբար, վերանում է այդ վարկածը:

Գիտական խորությամբ, նոր հարցադրումներով, լրացուցիչ փաստերի ընդգրկումով աչքի է ընկնում աշխատության այն բաժինը, որ վերաբերում է հայերենի շփականների ու ձայնորդների կազմավորմանը (երկրորդ գլուխ):

Այստեղ և այլուր հեղինակը իր համեմատական վերլուծությունների մեջ ներքաշում է հրապարակի վրա եղած հայտնի ստուգաբանական բառարանների նյութը: Բայց նա, բնականաբար, չի սահմանափակվում այդ նյութով և բառաքնական լայն ընդգրկումներով կատարում է նոր բազմաթիվ ստուգաբանություններ:

Նշված բաժիններում հեղինակի ձեռք բերած հետազոտական արդյունքները, առանձին հարցերի վերաբերյալ առաջ քաշած դրույթները ամփոփ կերպով ներկայացվում և վերջնական ձևակերպում են ստանում աշխատության վերջում, ավարտական գլխում: Բերվում են նաև այդ հետևությունները հաստատող համապատասխան աղյուսակներ:

Ավելորդ չէ նկատել, որ հեղինակը իր ձևակերպումներում, եզրակացություններում նուրբ զգուշավորություն է ցուցաբերում, շարադրանքի մեջ որոշակիորեն առանձնացնում է հիմնավորն ու ենթադրականը:

Կարևոր դեր է հատկացվում լեզվի պատմական կյանքում կատարվող պրոցեսների ժամանակագրությունը որոշելու հարցերին: Քննարկելով ժամանակակից լեզվաբանության մեջ առաջ քաշված մեթոդները՝ պրոֆ. Զահուկյանը առաջարկում է իր մեթոդը, որ նա կոչում է հակադարձ հաշվառված մեթոդ: Այս մեթոդի համաձայն լեզվի պատմական զարգացման մեջ որակական համակարգային փոփոխությունները (անցումները) իրար հաջորդում են ժամանակագրական համալարիությամբ: Այս մեթոդի և այլ մեթոդների համակցված օգտագործմամբ աշխատության վերջում կատարվում է նախագրային հայերենի պատմության նոր շրջանաբաժանում (պերիոդիզացիա): Ընդունվում են երեք հիմնական էտապ՝ հնդկարոպական, նախահայկական և հնագույն: Առաջին էտապում (5—4-րդ հազարամյակներ մ. թ. ա.) ուժեղանում են բարբառային տարբերակումները հնդկարոպական ընդհանրության մեջ: Ուրվագծվում է հայերենի անկախ լեզվական համակարգը: Նախահայերենի էտապը (մ. թ. ա. 3-րդ հազարամյակի սկզբներից մինչև մ. թ. ա.

XII դարը) ներկայանում է երկու ենթաշրջանով՝ վաղ նախահայերենի և ուշ նախահայերենի։ Այս էտապում հայերենը անջատվելով հնդեվրոպական միասնությունից, բռնում է ինքնուրույն, անկախ զարգացման ուղի։ Հնագույն էտապը (մ. թ. ա. XII դ. — մ. թ. V դ.) ևս ներկայացվում է երկու ենթաշրջանով՝ վաղ հնագույն և ուշ հնագույն (մինչև գրաբարյան)։ Այս էտապում են կազմավորվում հայ էթնիկական ընդհանրությունը, հայկական պետականությունը։ Շփումներ են տեղի ունենում փոքրասիական, կովկասյան և այլ լեզուների հետ։ Հայերենին են ձուլվում շատ բնիկ ցեղերի լեզուներ։ Հարստանում է մեր լեզվի բառապաշարը, մշակվում է նրա քերականական կառուցվածքը։

Գրախոսվող աշխատության մեջ էմպիրիկ փաստարկումները, որ սովորաբար բնորոշ են նման բնույթի աշխատություններին, չեն կաշկանդել հեղինակին անելու գիտական կռահումներ, թեև, իհարկե, պրոֆ. Զահուկյանը խիստ շափավոր է ենթադրական (հիպոթետիկ) դատողություններ անելու մեջ։ Այս և այլ հատկությունների շնորհիվ, ինչպես, օրինակ, աշխատության գիտական լիարժեքության, օգտագործված պրոբլեմների ակտուալության, շարադրելու ազատ, անկաշկանդ ոճի շնորհիվ՝ գիրքը կարդալից է մեծ հետաքրքրությամբ։

Անհրաժեշտ ենք գտնում մի երկու դիտողություն անելու։

1. Աշխատության վերջին հատվածներից մեկում (էջ 298—312), խոսելով հնդեվրոպական ու հայկական բաղաձայնների փոխարարելիության մասին, հեղինակը բերում է նաև հերթափոխվող բաղաձայնների արմատների ու ստուգաբանական դուգաձևերի բաղաձայնի փաստեր։ Իրանց ղզալի մասը իսկապես համոզիչ է, սակայն կան նաև կասկածելի զուգադրումներ։

2. խոսելով նախադրային հայերենի շրջանաբաժանման (պերիոդիզացիայի) մասին, պրոֆ. Գ. Զահուկյանը թույլից կերպով շոշափում է հայկական ցեղերի տեղաշարժի, հայ ժողովրդի (հայ էթնիկական ընդհանրություն) կազմավորման հարցը։ Մինչդեռ հայերի էթնիկական, պետական-քաղաքական կազմավորումը, հայկական ցեղախմբերի, ցեղային միությունների տեղաշարժերն ու տեղաբաշխումը, նրանց փոխներթափանցումների բարդ պրոցեսը միայն ակնարկային վերլուծությամբ չի կարելի պարզաբանել։

3. Հայերենի բաղաձայնական տեղաշարժերը և քմայնացման երևույթը պարզաբանելիս հեղինակը իրրե կլակետային վիճակ միշտ վերցնում է բաղաձայնների հնդեվրոպական միավորները։ Կարծում ենք, որ փոփոխությունների ենթարկվող տարրերը պետք է ներկայացվեն այն տեսքով, ինչպիսին նրանք դրսևորվել են հայերենի զարգացման տվյալ էտապում, քանի որ դրանք մեր լեզվի արդեն ինքնուրույն, անկախ զարգացման շրջանին են վերաբերում։

4. Թեև աշխատության ուսերեն հրատարակությունը ինչ որ չափով արդարացնում է հեղինակի նկատառումները իր հարցադրումներին ավելի լայն ճանաչում տալու համար, բայց այն սլետք է հրապարակ հանվեր գոնե հայերեն ընդարձակ ամփոփումով։

Ավելորդ չենք համարում նշել, որ վերջերս լույս տեսավ պրոֆ. է. Ա. Մակակի գրախոսականը («Вопросы языкознания», 1968, № 3) պրոֆ. Գ. Զահուկյանի սույն ուսումնասիրության վերաբերյալ։ Ափսոսում ենք, որ դրախոսականի հեղինակը, բարձր գնահատելով աշխատությունը և միաժամանակ անելով արժեքավոր շատ դիտողություններ, այն ըստ ամենայնի չի ներկայացրել։

Վերջում հարկ ենք համարում ընդգծել, որ սույն աշխատությունը հաջողված գործ է և արժեքավոր ներդրում է հնդեվրոպական լեզուների համեմատական ուսումնասիրության, մասնավորապես հայագիտության բնագավառում։

Հ. Չ. ՊԵՏՐՈՍՅԱՆ